

ԷԼՄԻՐԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի ասպիրանտ



**ԴԱՏԱԻՐԱՎԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ
ԴԵՐԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԱՆԽՈՐՈՇՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ**

Սահմանադրական բարեփոխումները այս կամ այն չափով իրենց արտացոլումն են ստացել սահմանադրական գրեթե բոլոր հիմնադրույթներում, դրանք անխտիր առնչվել են Սահմանադրության սկզբունքային նորմերի հետ, ուստի, հիրավի բարդ խնդիր է դրանցից որևէ մեկին նախապատվություն տալը: Տվյալ դեպքում դատաիրավական բարեփոխումների հատվածին առանցքային նշանակություն տալով, չենք փորձում նսեմացնել բարեփոխումների մյուս ուղղությունները, պարզապես հարկ ենք համարում ընդգծել, որ բարեփոխումների այս հատվածը հիրավի դարձել է սահմանադրական ողջ բարեփոխումների և գնահատման համընդհանուր չափանիշը և երաշխիքը, ինչպես նաև բարեփոխումների ուղղությունները կանխորոշող առանցքային գործոնը:

Դատական համակարգի բարելավումը միջազգային համաձայնագրերով և պետությունների սահմանադրություններով ամրագրված մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության, քաղաքական համակարգի ժողովրդավարացման, ինչպես նաև ողջ սահմանադրական կարգի ամրապնդման լավագույն երաշխիքն է¹: Դատաիրավական բարեփոխումների առանցքային նշանակությունը սահմանադրական բարեփոխումների ենթատեքստում հնարավորինս համալիր հետազոտելու և առարկայական դարձնելու նկատառումով նպատակահարմար ենք գտնում ստորև ներկայացնել այն բնութագրող հիմնական հատկանիշները՝

1. Սահմանադրական բարեփոխումների, թերևս, ամենագերակայող գաղափարը մարդու և քաղաքացու՝ միջազգային իրավունքի սկզբունքներին համահունչ իրավունքների ու ազատությունների ամրագրումն ու դրանց համարժեք պաշտպա-

նության լծակների ու երաշխիքների սահմանումն է: Այս տեսանկյունից դատաիրավական բարեփոխումների անհրաժեշտությունը առաջին հերթին պայմանավորված է այն խիստ կարևոր փաստարկով, որ մարդու իրավունքների պաշտպանության ամենակատարյալ ու հուսալի եղանակը համարվում է դատական կարգը: Թերևս դա է պատճառը, որ Սահմանադրության՝ մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների վերաբերյալ հատվածի առնվազն մեկ տասնյակի հասնող հոդվածներ նվիրված են իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության երաշխիքներին:

Սահմանադրության բազմաթիվ այլ հոդվածներ անմիջականորեն չեն առնչվում դատաիրավական բարեփոխումներին, սակայն դրանք ևս փոխկապակցված են այդ բարեփոխումների հետ: Այսպես, օրինակ, Սահմանադրության 5-րդ հոդվածում ամրագրված իշխանությունների տարանջատման և հակակշռման սկզբունքը առանցքային նշանակություն ունեցող երաշխիք է դատական իշխանության անկախության կայացման ու բարելավման համար: Նույն այդ հոդվածում ամրագրված է օրինականության սկզբունքը, որը, նախ, պարտավորեցնում է բոլոր պետական մարմիններին և պաշտոնատար անձանց ձեռնպահ մնալու դատական իշխանության գործառույթներին որևէ կերպ միջամտելուց, մյուս կողմից՝ դատարանները պարտավորվում են իրականացնել զուտ արդարադատության գործառույթ և ձերբազատվել նախկինում ստանձնած ու ավանդույթի ուժ ունեցող վարչական գործառույթների իրականացումից և այլն:

Սահմանադրության առանձին հոդվածներ ուղղակիորեն են ամրագրում դատարանի դատազորության շրջանակները, դրանով իսկ ընդգծելով

www.lawinstitute.am

Սահմանադրության ներքին բովանդակությանը խիստ համահունչ դատական համակարգ ձևավորելու գաղափարը: Այսպես՝ Սահմանադրության 16-րդ հոդվածի համաձայն. «Եթե ձերբակալված անձը ձերբակալման պահից 72 ժամվա ընթացքում դատարանի որոշմամբ չի կալանավորվում, ապա նա ենթակա է արձակման»: Այսպիսով, անձի առավել սկզբունքային իրավունքների և հիմնարար ազատությունների սահմանափակման գործընթացում էական դերակատարում է վերապահվում դատարանին, ինչի հիմքում ընկած է այն ելակետային դիրքորոշումը, ըստ որի արտադատական կարգով իրավունքների սահմանափակումը կարող է կատարվել միայն բացառիկ դեպքերում և հնարավորինս սեղմ ժամկետներով. «Արտադատական ընթացակարգով ազատությունից զրկելը ոչ միայն իրականացվում է Սահմանադրությամբ ամրագրված բացառիկ դեպքերում, այլև ուղեկցվում է խիստ սահմանափակ ժամկետով»²:

Այսպիսով, դատաիրավական բարեփոխումներ իրականացնելու բուն անհրաժեշտությունը և դրա իրականացման ուղղությունները պայմանավորված են Սահմանադրության բարեփոխումների ողջ ծավալն ապահովելու բնականոն ընթացքով: Վերջին հաշվով, Սահմանադրության յուրաքանչյուր դրույթ կարող է իրատեսական և երաշխավորված լինել, եթե դրանք ուղեկցվում են համապատասխան պետական հարկադրանքի կիրառման, իսկ անհրաժեշտության և բավարար հիմքերի առկայության դեպքում՝ դատական կարգով կիրառվող պատասխանատվության միջոցների նշանակման ու իրականացման հնարավորությամբ: Այս տեսանկյունից դատական համակարգը ևս հանդիսանում է պետական հարկադրանքի բաղադրիչ և կոչված է իրեն բնորոշ լիազորություններով ապահովելու Սահմանադրության գերակայությունը: Ասվածը հավասարապես վերաբերում է սահմանադրական դատարանի կազմավորման և գործունեության սահմանադրական հիմքերին: Կարծում ենք, օրինակ, սահմանադրական դատարանի քննությանը ենթակա գործերի շրջանակի ընդլայնումը մեծ մասամբ թելադրված էր հենց մարդու իրավունքների գերակայության խնդրի համարժեք լուծման անհրաժեշտությամբ:

2. Իշխանությունների տարանջատման և հավասարակշռման սկզբունքի սահմանադրական վավերագրումը կարող է լիարժեք լինել միայն այն

ժամանակ, երբ դատական իշխանությունը այդ համակարգում հիրավի ձեռք է բերում անհրաժեշտ անկախություն և իշխանության մյուս ճյուղերին հավասարակշռելու իրական ունակություն:

Այս սկզբունքի հիմնական ուղղվածությունը հենց դատական իշխանության անկախության ապահովումն է, քանզի իշխանության երեք ճյուղերից առավել խոցելին համարվում է հենց դատական իշխանությունը: Ի դեպ, այս դատողության հիմնավորվածության մասին են վկայում Սահմանադրության բազմաթիվ այլ հոդվածներ, որոնք մեծ մասամբ միտված են դատարանների անկախության երաշխիքի բաղադրիչների ամրագրմանը: Ընդ որում, դժվար չէ նկատել, որ, ի տարբերություն օրենսդիր և գործադիր իշխանությանն առնչվող սահմանադրական նորմերի, դատական իշխանությանն առնչվող նորմերը մեծ մասամբ ունեն դատական իշխանության անկախությունն ընդգծելու, այն երաշխավորված դարձնելու ուղղվածություն: Ավելին, իշխանության ոչ մի ճյուղի վերաբերյալ սահմանադրական դրույթներում, բացառությամբ դատական իշխանության հիմնադրույթների, չկա որևէ նորմ, որով սահմանվի այդ իշխանության ճյուղի անկախությունը, թեպետ, բնականաբար իշխանությունների տարանջատման մասին կարելի է լիարժեք խոսել միայն այն դեպքում, երբ առկա է դրանցից յուրաքանչյուրի անկախությունը:

Հավելենք, որ Սահմանադրության հիմնադրույթների փաստացի կիրառումը մեծ մասամբ պայմանավորված է նաև իշխանության մյուս ճյուղերի նկատմամբ դատական իշխանության ներագրեցության բացառապես հավասարակշռված լծակներին նախապատվություն տալով: Խնդիրն այն է, որ դատարանները պետք է բացառապես իրականացնեն արդարադատության գործառնություն և ցանկացած հիմնավորմամբ, այդ թվում՝ անկախության ամրապնդման անհրաժեշտությամբ չձգտեն փոխարինել իշխանության այլ մարմիններին, քանզի այդ դեպքում ևս խաթարվում է նույն Սահմանադրության առանցքային սկզբունքների պաշտպանության ողջ գործընթացը: Կարծում ենք, որ այդպիսի դեպքերում դատարանները ոչ թե ձեռք են բերում լիարժեք անկախություն և խրախուսելի կարգավիճակ, այլ՝ դառնում առավել խոցելի, քանի որ, օրինակ, գործադիր իշխանությանը վերապահված լիազորություններ իրականացնելիս, դատարանները ակամայից ներքաշվում են ոչ թե դատաիրավա-

կան, այլ վարչաիրավական հարաբերությունների մեջ: Այսպես, եթե դատարանները, քննելով օրինակ, ձեռնարկատիրական գործունեության լիցենզիա տալը մերժելու մասին վարչական ակտի դեմ բերված հայցադիմումը, ոչ թե պարտավորեցնում են հատկացնելու լիցենզիա, այլ հենց իրենք են կայացնում լիցենզիա տալու մասին որոշում, ապա հարկադրված են լինում իրականացնելու վարչական վարույթ վարչական դատավարության փոխարեն:

Յավոք, վերը բերված օրինակները կիրառվում են նաև գործնականում՝ դրանից բխող բացասական հետևանքներով: Այսպես, քննարկելով 2002-04թթ. ընթացքում հողահատկացումը մերժելու վերաբերյալ Երևանի քաղաքապետի որոշումների դեմ բերված հայցադիմումները, Երևան քաղաքի համայնքային դատարաններում կայացվել են բազմաթիվ դատական ակտեր, որոնցով ոչ թե վարչական ակտերը ճանաչվել են անվավեր, կամ քաղաքապետը պարտավորեցվել է կայացնել իրավաչափ որոշումներ, այլ պարզապես ճանաչվել է քաղաքացիների սեփականության իրավունքը վիճարկման առարկա հողամասերի նկատմամբ: Ընդ որում, այդ գործերով Երևանի քաղաքապետը սահմանված կարգով պատասխանող չի ճանաչվել այն անհիմն պատճառաբանությամբ, որ դատարանում քննվել է ոչ թե իրավունքի վեճ, այլ՝ փաստի ճանաչման հայց: Հիշյալ դատական ակտերի մեծ մասը սահմանված կարգով բողոքարկվել և բեկանվել է, սակայն փաստն ինքնին վկայում է այն մասին, որ գործնականում ևս չի բացառվում դատարանների անհարկի միջամտությունը գործադիր իշխանությանը³:

3. Ցանկացած նախաձեռնություն իշխանության որևէ այլ ճյուղի, այդ թվում՝ գործադիր իշխանության կողմից իրականացվող ցանկացած ծրագիր ի սկզբանե մատնված է ձախողման, եթե այդ ոլորտում անխուսափելիորեն ծագող վեճերի քննության համար երաշխավորված չէ պատշաճ արդարադատության իրականացում: Գործնական վերլուծությունները ցույց են տալիս, որ միայն դատարանների անկախության ապահովմանն ուղղված ճիգերը բնավ բավարար չեն հիշյալ երաշխիքը իրատեսական համարելու համար:

Հարկ է նկատել, որ մայրցամաքային իրավական համակարգի պայմաններում, իրավունքի աղբյուրների շրջանակը սահմանափակվում է բա-

ցառապես օրենսդիր և գործադիր իշխանության իրավաստեղծ գործունեության արդյունքում, ինչը սահմանափակում է լիարժեք դատական նախադեպի կիրառման հնարավորությունը: Այս սկզբունքային նշանակություն ունեցող հիմնադրույթին համապատասխան՝ սահմանադրական բարեփոխումները որդեգրել են բացառապես այնպիսի իրավական լուծումներ, որոնք թեպետ դատարանին վերապահում են իրավաստեղծ գործունեության որոշ տարրերով, ինչպես նաև դատական համակարգում օրենքների միատեսակ կատարման գործառույթներով, այնուամենայնիվ, դատական ակտերը, որպես կանոն, չեն կարող համարվել իրավունքի աղբյուրներ⁴: Ուսումնասիրությունները վկայում են այն մասին, որ նաև ավանդական երկրներում է նկատվում աստիճանաբար նախադեպի, որպես իրավունքի աղբյուրի շրջանակների սահմանափակման միտում: Այդ մասին վկայում են նաև օտարերկրյա իրավագետները. «Անգլիայում և Ռուսում նախադեպը, որպես իրավունքի աղբյուր, գոյատևել է մինչև այն ժամանակները, երբ ձևավորվել է լիարժեք խորհրդարանական իշխանություն և խորհրդարանական օրենսդրություն: Գործադիր իշխանության ուժեղացմանը զուգահեռ էական տեղ է տրվել նաև ենթաօրենսդրական ակտերին, ինչը ևս աստիճանաբար դուրս է մղում նախադեպային հենքով ձևավորված իրավունքի աղբյուրը»:

4. Դատաիրավական բարեփոխումները միաժամանակ կարևոր երաշխիք են իշխանության մյուս ճյուղերի միջև ծագած հակասությունները հնարավորինս առանց անիրավաչափ բախումների լուծելու տեսանկյունից: Քաղաքական կյանքը հաճախ է մատուցում քաղաքական ուժերի միջև սուր բախումների իրավիճակներ, իսկ դրանք ժողովրդավարական եղանակներով լուծելու միակ ճանապարհը՝ դատական եղանակն է, ինչը հնարավորություն է տալիս կողմերին ձեռնպահ մնալ հակասությունները բռնություններով լուծելու «հրապուրանքից» և նախապատվությունը տալ բացառապես օրինական եղանակներին:

Իհարկե, դա չի նշանակում, որ քաղաքական հակասությունների լուծման քաղաքակիրթ եղանակների սահմանումն ինքնին ամբողջությամբ չէզոքացնում է բռնությունների ու անիրավաչափ այլ քայլերի դիմելու հնարավորությունը, սակայն ակնհայտ է, որ դատական ճկուն համակարգերի

www.lawinstitute.am

առկայությունը մեղմացնում է այդ անցանկալի երևույթների ծագման հավանականությունը: Բացի այդ, ժողովրդավարական ինստիտուտների առկայությունը նպաստում է այնպիսի բարոյահոգեբանական մթնոլորտի ձևավորմանը, որի պարագայում առավել նպաստավոր պայմաններ են ստեղծվում քաղաքական սուր տարաձայնությունները առանց հակամարտությունների ու բախումների լուծելու ավանդույթների կայացման համար:

Որքան կայացած է լինում դատական համակարգը, որքան մեծ է լինում վերջինիս նկատմամբ վստահությունը, այնքան առավել նշանակալից է քաղաքական հակամարտությունները բացառապես քաղաքակիրթ եղանակներով, առանց բռնությունների դիմելու եղանակով լուծելու հավանականությունը: Սա, իհարկե, չի նշանակում, որ կայացած դատական համակարգի պարագայում բացառվում է քաղաքական և տարաբնույթ այլ հակամարտությունները բռնությունների եղանակով լուծելու տարբերակը: Ընդ որում, քաղաքական ուժերը, հաճախ ի սկզբանե հերքելով դատական եղանակով տարաձայնությունները լուծելու հարցում դատարանների, այդ թվում՝ սահմանադրական դատարանի կողմից անաչառ դիրքորոշում դրսևորելու հնարավորությունը, ղեկավարվում են ոչ թե այն փաստարկով, որ իրոք չեն վստահում դատական համակարգին, այլ փորձում են հասարակությանը ապացուցել իրենց ծայրահեղ գործողությունները, հընթացս վարկաբեկելով իշխանության մի կարևոր հատվածի, ինչը պայմանավորված է սոսկ քաղաքական նկատառումներով:

5. Դատաիրավական բարեփոխումների հիմնարար ուղղություններից է նաև երկրում օրինականության, օրենքների միատեսակ կատարման ապահովման խնդրի համարժեք լուծումը: Վերևում, մասնավորապես սույն աշխատության 1-ին գլխի 2-րդ պարագրաֆում մենք արդեն անդրադարձել ենք այդ հարցին: Աշխատության այս հատվածում նպատակահարմար ենք համարում հիշյալ հարցը քննարկման առարկա դարձնել այլ ասպեկտով: Կոնկրետ, անհրաժեշտ ենք գտնում բացահայտել սահմանադրական բարեփոխումների առանցքում օրինականության մեծ դերի և դրա ապահովման գործում դատաիրավական բարեփոխումների նշանակության հարցերը և դրանց լուծման առավել շահեկան եղանակները:

Բնականաբար, սահմանադրական բարե-

փոխումների բնականոն ընթացքն ապահովելու տեսանկյունից դատաիրավական բարեփոխումների նշանակության վերաբերյալ վերը նշված դատողությունները, փաստարկները սպառնիչ չեն: Գործնականում ծագում են նաև այդ փոխադարձ կապը հաստատող այլ իրավիճակներ, սակայն ներկայացված նյութը, կարծում ենք, ևս բավարար է պատկերացում կազմելու այն վճռորոշ դերի մասին, որ ունեն դատաիրավական բարեփոխումները:

Եթե փորձենք համեմատություն անցկացնել այլ ոլորտներում իրականացվող բարեփոխումների և դատաիրավական բարեփոխումների միջև, ապա, կարծում ենք, պարզ կդառնա, որ առավել ցավոտ ու խիստ տարաձայնություններով են ուղեկցվում, հատկապես, դատաիրավական բարեփոխումները: Իսկ դա, հայտնի իմաստով, դանդաղեցնում է սահմանադրական բարեփոխումների ողջ գործընթացը: Մեծ մասամբ այն պայմանավորված է դրանց ուղղությունների և իրականացման եղանակների առնչությամբ անհամեմատ սուր տարաձայնությունների առկայությամբ:

6. Իրավական բարեփոխումների անքակտելի մասն է կազմում նաև անհրաժեշտ բարոյահոգեբանական մթնոլորտի ձևավորմանը նպաստելը: Ըստ միջազգային հետազոտողների, ինչի հետ մենք ևս համամիտ ենք. «Հայաստանում պատմականորեն ձևավորվել է հանրային վստահության պակաս, երբ հասարակությունը հակված է մտածելու, որ պետությունը հետամուտ չի լինում ընդունված սկզբունքների պահպանմանը և չի պաշտպանում իր քաղաքացիներին»⁶: Այդ առումով հարկ է ներդնել այնպիսի ընթացակարգեր և ինստիտուտներ, որոնք համապատասխանում են գործունեության թափանցիկության առավել բարձր ցուցանիշների:

Այժմ անդրադառնանք սահմանադրական բարեփոխումների շրջանակում դատաիրավական բարեփոխումների առնչությամբ ծագած խոչընդոտների բնույթին և դրանց հաղթահարման խնդիրներին:

Կարծում ենք, այս ոլորտում բարեփոխումների ուղղությունների առնչությամբ հիրավի սուր տարաձայնությունների առկայությունը պայմանավորված է մի շարք հոգեբանական և օբյեկտիվ գործոններով, որոնց վերաբերյալ համարժեք պատկերացումները հնարավորություն են տալիս իրավաստեղծ քաղաքականություն իրականացնե-

լիս ընտրել առավել արդյունավետ տարբերակներ: Ստորև փորձենք ներկայացնել վերը նշված երևույթի առավել բնորոշ տարրերը՝

ա) դատախիրավական բարեփոխումներն անմիջականորեն առնչվում են մի շարք կառույցների գերատեսչական շահերին: Հետաքրքիր է այն, որ գերատեսչական շահերի անհարկի բախումները բնորոշ են նաև առավել կայուն իրավական համակարգ ու փորձ ունեցող երկրներին⁷: Խնդիրը հատկապես բարդանում է նրանով, որ այդ կառույցների յուրովի ընկալվող գերատեսչական շահերը և դրանցով պայմանավորված փոխհարաբերությունները ակնհայտ սրված են ու հաճախ՝ անհամատեղելի:

Այսպես, օրինակ, ոստիկանության կամ ցանկացած այլ համակարգում գործող քննչական մարմինները փորձում են ամեն կերպ հիմնավորել քննիչների ինքնուրույնության և հնարավորինս դատախազական հսկողությունից կամ դատական վերահսկողությունից դուրս մնալու անհրաժեշտությունը, մինչդեռ դատախազները և դատավորները հակված են հիմնավորելու, որ մինչդատական վարույթում դատախազական հսկողության և դատական վերահսկողության լիազորությունները խիստ ընդլայնման կարիք ունեն: Եթե ասվածին հավելենք նաև փաստաբանների, փորձագետների և դատավարությանը այս կամ այն չափով մասնակցող կառույցների հակասական շահերը, ապա պատկերն առավել ամբողջական կլինի,

բ) յուրաքանչյուր նորամուծություն, որը ներառված է դատախիրավական բարեփոխումների ծրագրում, փոխկապակցված է այնպիսի սոցիալ-քաղաքական և ֆինանսական խնդիրների իրականացման հետ, որոնք պետական համակարգից անխուսափելիորեն պահանջում են որոշակի պատրաստվածություն ու ներդրումներ, մինչդեռ երկու դեպքում դրանք միշտ չէ, որ բավարար չափով առկա են լինում: Դատախիրավական բարեփոխումները փոխկապակցված են այնպիսի հարցադրումներով, որոնք առանց լուրջ ֆինանսատնտեսական ներդրումների պարզապես հնարավոր չէ լուծել: Մասնավորապես, երկար ժամանակ քննարկվում էր վարչական դատարան ունենալու անհրաժեշտության հարցը: Բացի այն, որ գուտ քաղաքական նկատառումներով այդպիսի դատական ատյանի ստեղծումը ենթադրում է որոշակի բարդությունների հետ առնչվելու անխուսափելիություն, խնդիրը

ակնհայտ բարդ էր նաև տնտեսական կտրվածքով, քանզի խոսքը ոչ թե եղած հաստիքների հաշվին, այլ միանգամայն նոր հաստիքների, այն էլ՝ նեղ մասնագիտական անհրաժեշտ պատրաստվածություն անցած դատավորներ ունենալու, համապատասխան կառուցվածքային կարիքների լուծման անհրաժեշտության մասին է և այլն:

Միջազգային փորձի վերլուծությունը ևս բերում է այն համոզման, որ արդարադատության մատչելիության և յուրաքանչյուր այլ առանցքային սկզբունքի նշանակությունը պատշաճ գնահատելով հանդերձ, ցանկացած պետություն ևս ձգտում է ներդնել այնպիսի ինստիտուտներ և համակարգեր, որոնք կհանգեցնեն այդ ոլորտում անհարկի ֆինանսական ծախսերի և մարդկային ռեսուրսների անարդյունավետ ծախսի կրճատմանը⁸,

գ) դատախիրավական բարեփոխումներին առնչվող խնդիրները, ինչպես արդեն նշվեց, անմիջականորեն առնչվում են մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության հարցերին, ինչն ինքնին էապես մեծացնում է դրանց հասարակական հնչեղությունը: Համեմատական վերլուծությունը, թերևս, բերում է այն համոզման, որ Ազգային ժողովի քննարկմանը ներկայացված դատախիրավական բարեփոխումներին առնչվող օրենսդրական ակտերի շուրջ 85 տոկոսը նախապես ներկայացված է լինում միջազգային փորձաքննության, մինչդեռ՝ այլ օրենսդրական ակտերի պարագայում այդ տոկոսը կազմում է սոսկ 30 տոկոս: Բնորոշ է նաև այն, որ բանկային, գյուղատնտեսության ոլորտին առնչվող օրենսդրական ակտերի պարագայում այդ ցուցանիշն էլ ավելի ցածր է և այլն:

Բնականաբար, նման իրավիճակում խոսել հնարավորինս սեղմ ժամկետներում իրականացվող իրավաստեղծ գործունեության մասին իրատեսական չէ, քանի որ փորձաքննությունների ինստիտուտը ենթադրում է ոչ միայն որոշակի ժամանակի հատկացում բուն փորձաքննությանը, այլև դրա արդյունքների հաշվառմամբ արդեն իսկ մշակված և պաշտոնական շրջանառության մեջ դրված օրինագծերի վերանայմանը և լրամշակմանը:

Միաժամանակ, այս առնչությամբ, կարծում ենք, որ ժամանակն է իրավական կարգավորման առարկա դարձնել միջազգային իրավական փորձագիտական եզրակացության կիրառմանն առնչվող հասարակական հարաբերությունները,

դ) դատախիրավական բարեփոխումների

հնարավորինս արագ իրականացման գործում շահագրգռված չեն նաև գործնական աշխատանքում ներգրավված անձինք, որոնց համար կտրուկ և արմատական փոփոխությունները մշտապես ընկալվում են որպես անկանխատեսելի և դեռևս բավարար չափով անհասկանալի նորամուծություններ: Վերջիններս նաև մտավախություն ունեն, որ դրանց պրակտիկ կիրառումը կարող է ընթանալ բոլորովին այլ ուղղությամբ և եղանակներով: Վերջապես, արմատական փոփոխություններով ուղեկցվող իրավական նորամուծությունները ենթադրում են որոշակի մասնագիտական պատրաստվածություն, իսկ գործող իրավական համակարգին քաջածանոթ և փորձառու աշխատողների համար դա, բնականաբար, անհարկի ծանրաբեռնվածություն է,

ե) դատաիրավական բարեփոխումներին գուտ քաղաքական նկատառումներով երբեմն ակնհայտ անիրավաչափ խոչընդոտում են նաև ընդդիմադիր քաղաքական ուժերը: Վերջիններս թեպետ քաջ գիտակցում են, որ այդ բարեփոխումները հաճախ շահեկան են առաջին հերթին իրենց համար և համահունչ են իրենց իսկ կողմից առաջ քաշված գաղափարներին, սակայն գուտ քաղաքական հաշվարկը հարկադրում է նրանց անհիմն ու անխնայ քննադատության ենթարկել այդ նախաձեռնությունները, որպեսզի հանրության մեջ բացառեն այդ բարեփոխումների նկատմամբ համարժեք կարծիքի ձևավորումը, ամեն գնով վարկաբեկեն իշխանությունների յուրաքանչյուր նախաձեռնություն: Իսկ այդպիսի քաղաքական ակցիաների արդյունքում իշխանությունները հարկադրված են լինում կազմակերպել առավել տևական ու լայն ընդգրկվածություն ունեցող հանրային քննարկումներ: Լավագույն դեպքում գոնե մասամբ հաջողվում է հանրության մեջ ձևավորել համարժեք և իրականությանը համահունչ հանրային կարծիք, իսկ երբեմն էլ, անհարկի քաղաքական հուզումներից ու նմանաբնույթ այլ երևույթներից դրդված, այդ նախաձեռնությունները անորոշ ժամկետով կանխարգելվում են: Դրականը տվյալ դեպքում այն է, որ իշխանությունները վերը նշված իրավիճակներում միայն ծայրահեղ դեպքերում են ձեռնպահ մնում իրենց նախաձեռնություններից:

Կարծում են՝ ասվածի վառ օրինակն է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով և Հայաստանի Հանրապե-

տության դատական օրենսգրքով նախատեսված դատական սանկցիաների վերանայման առնչությամբ կառավարության նախաձեռնությունը: Մասնավորապես, 2008թ. մարտյան իրադարձությունների առնչությամբ հարուցված քրեական գործերի դատաքննության ընթացքը ցույց տվեց, որ ամբաստանյալները կազմակերպված դիմում են բացառապես այնպիսի քայլերի, որոնք միտված էին դատական նիստերի զանգվածային ձախողումներին, ընդ որում, ամբաստանյալները տևական ժամանակով իրենց թույլ էին տալիս դատավարության մասնակիցներին վիրավորելու, հայտնելու և անհարկի քաղաքական ելույթներ: Այս հանգամանքը հաշվի առնելով՝ կառավարությունը միանգամայն իրավաչափորեն հանդես եկավ դատական սանկցիաների վերանայման այնպիսի նախաձեռնությամբ, որը թույլ էր տալիս դատարանին վերը նշված բնույթի խախտումներ թույլ տված ամբաստանյալներին կարճ ժամանակով հեռացնել նիստերի դահլիճից՝ պարտադիր ապահովելով նրանց պաշտպանների մասնակցությունը դատաքննությանը, ինչպես նաև հեռացված ամբաստանյալի վերադառնալուց հետո պարտադիր ծանոթացնելով նրան դատաքննության նյութերին:

Հիշյալ նախաձեռնությունը միանշանակ համապատասխանում էր արդար դատաքննության միջազգային չափանիշներին և կոչված էր երաշխավորելու նաև հենց այն ամբաստանյալների շահերը, որոնք իրենց թույլ էին տալիս խոչընդոտելու դատական նիստերի բնականոն ընթացքը: Խնդիրն այն է, որ անհարկի ձգձգվող դատական նիստերի երևույթը չի կարող բխել ամբաստանյալների շահերից, չի կարող վերջիններիս համար դիտվել որպես ընդունելի տարբերակ:

Ընդ որում, այս մոտեցումների հիմքում ընկած են նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 6-րդ հոդվածի հիմնադրույթները, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային դատական ակտերը: Պատահական չէ, որ հիշյալ հոդվածում բացարձակապես ակնարկ չկա ամբաստանյալի այնպիսի իրավունքի մասին, ինչպիսին է դատական նիստերը խոչընդոտելու միջոցով դատաքննության բնականոն ընթացքը ձախողելը:

Ինչևէ, քաղաքական ընդդիմադիր ուժերը

անհապաղ անցան կազմակերպված ակցիաների, փորձելով ձախողել վերը նշված նախաձեռնությունը և մեղադրել կառավարությանը հակաժողովրդավարական նախաձեռնություններով հանդես գալու միտումներ դրսևորելու մեջ: Տվյալ դեպքում կառավարությունը հետևողական գտնվեց, կարողացավ համոզիչ դարձնել իր դիրքորոշումները և նպաստել Ազգային ժողովում այդ օրենսդրական ակտերի ընդունմանը:

Միաժամանակ նկատենք, որ վերը նշված նախաձեռնությունը մենք սուսկ ընդհանուր գծերով ենք համարում իրավաչափ, իսկ առանձին դրույթների առնչությամբ ունենք տարածայնություններ, որոնք արդեն առանձին խնդիրներ են: Թեմայից չշեղվելու նկատառումով նշենք միայն, որ ամբաստանյալի իրավունքները սահմանափակելիս չէր կարելի հիմնավորված համարել տևական ժամանակով դատական նիստերից հեռացնելը, քանզի բուն նպատակը ոչ թե ամբաստանյալին պատժելն է, այլ դատական նիստերի բնականոն ընթացքն ապահովելը: Այլ կերպ ասած, հարկ էր պարզապես ընտրել այնպիսի ընթացակարգեր, որոնք հնարավորություն կտային միայն մեկ-երկու նիստերից հեռացնել, իսկ խախտումները կրկնվելու դեպքում դատարանը զրկված չէր լինի յուրաքանչյուր անգամ դատական նիստերից հեռացման սանկցիա կիրառելու հնարավորությունից:

Ընդհանուր առմամբ, դատաիրավական բարեփոխումներին առնչվող հարցադրումները սերտորեն առնչվում են նաև սահմանադրական բարեփոխումների այնպիսի հիմնահարցերի, ինչպիսիք են՝ Նախագահի կարգավիճակը, կառավարման ձևը, քաղաքական ռեժիմը և այլն¹⁰: Այսպես, ինչպես հայտնի է, մինչև 2005թ. սահմանադրական բարեփոխումները Հանրապետության Նախագահը համարվել է Հայաստանի Հանրապետության արդարադատության խորհրդի նախագահ և դատավորների անկախության երաշխավորող: Այդ փուլում գերիշխում էր այն մտայնությունը, որ դատական իշխանության անկախության ապահովման խնդիրն այնքան կարևոր է, որ դրան հասնելու եղանակներին կարելի է էական նշանակություն չտալ, իսկ Նախագահի բարձր պաշտոնական դիրքը հնարավոր կլինի ծառայեցնել այդ խնդրի լուծմանը:

Նշված տեսակետների հիմնավորվածության հարցին հանգամանորեն չանդրադառնալով

հանդերձ, նկատենք միայն, որ գործնականում այդ տեսակետները այնքան էլ կենսունակ չգտնվեցին: Մասնավորապես, պարզ դարձավ, որ ցանկացած իշխանության օղակին, այդ թվում՝ անգամ երկրի Նախագահին որպես դատական իշխանության երաշխավոր ճանաչելը հղի է այնպիսի վտանգավոր հետևանքներով, ինչպիսիք են դատավորների անկախության ձևախեղումները: Տվյալ դեպքում, մեր կարծիքով, ի հայտ եկան այնպիսի ձևախեղումներ, որոնք հանգեցրին գործադիր իշխանության կողմից արդարադատության իրականացմանը միջամտելու, դատավորների կադրային քաղաքականությունը կանխորոշելու դրսևորումների: Բնորոշ է այն, որ թեպետ դատավորների անկախության երաշխավորի կարգավիճակը վերապահված էր Հանրապետության Նախագահին, այնուամենայնիվ, դատավորների նկատմամբ, ըստ էության, որոշ իշխանական լծակներ էին ձեռք բերել այնպիսի պաշտոնյաներ, որոնք որևէ կերպ չէին տեղավորվում սահմանադրական կարգավորումների շրջանակներում: Այսպես, պարբերաբար, ըստ նախապես հաստատված ծրագրի, դատավորների գործունեությունը ստուգման առարկա էր դառնում Հայաստանի Հանրապետության արդարադատության խորհրդի աշխատակազմի կողմից, որի նախագահը անմիջականորեն ենթարկվում էր Հանրապետության Նախագահին:

Գործող Սահմանադրությունում, կարծում ենք, Հանրապետության Նախագահի լիազորությունների վերանայումը միանշանակ համապատասխանում է դատական իշխանության անկախության միջազգային սկզբունքներին: Առավել շահեկան է համարվում այն, որ արդարադատության խորհրդի կազմից միանգամայն հիմնավորված կերպով հանվել են Հանրապետության գլխավոր դատախազը և արդարադատության նախարարը, որոնք նախկինում, ի պաշտոնե, համարվում էին արդարադատության խորհրդի նախագահի տեղակալներ: Կարծում ենք, հիմնավորված լուծում է տրվել նաև արդարադատության խորհրդի նիստերը վարելուն առնչվող խնդիրներին, մասնավորապես, վճռաբեկ դատարանի նախագահը ոչ թե ձեռք է բերել այդ կարևոր կառույցի նախագահի, այլ սուսկ նիստերը վարողի կարգավիճակ, ինչը պարզապես անհրաժեշտ է նիստերի բնականոն ընթացքն ապահովելու տեսանկյունից:

Այսպիսով, չնսեմացնելով սահմանադրա-

www.lawinstitute.am

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

կան բարեփոխումների մյուս ուղղությունները, աշխատության սույն հատվածում փորձ ենք արել ընդգծել դատաիրավական բարեփոխումների առանցքային նշանակությունը սահմանադրական բարեփոխումների անշրջելիությունն ապահովելու և դրանց հիմնական ուղղությունները պահպանելու տեսանկյունից: Ակնհայտ է, որ այլ ուղղություններով ընթացող բարեփոխումները (ֆինանսա տնտե-

սական, սոցիալական և այլն) ևս կանխորոշել ու դեռ կանխորոշելու են սահմանադրական բարեփոխումների ողջ ընթացքը, սակայն ցանկացած նախաձեռնություն կարող է կյանքի կոչվել և ծառայել իր բուն նպատակին, եթե ի սկզբանե ամրագրված խնդիրներն ուղեկցվում են անհրաժեշտ դատաիրավական երաշխիքներով:

¹ Տե՛ս Droit du contentieux administratif, Montchrestien, Professeur e'me'rite de l'Universite', Pantheon-Assas (Paris 11), 1998, էջ 386:

² Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, ընդհանուր խմբագրությամբ՝ Գ.Հարությունյանի, Ա.Վաղարշյանի, Երևան, «Իրավունք», 2010, էջ 195:

³ Նշված օրինակները վերցված են Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի 2002-05թթ. արխիվից:

⁴ Տե՛ս Դատական համակարգեր, Երևան, «Օրենք և իրականություն», 2008:

⁵ Տե՛ս Hood Philips O., Jackson P., Constitutional and Administrative Law. L., 1988, էջ 227:

⁶ Տե՛ս Fisher George, Plea Bargaining's Triumph: A History of de Plea Bargaining in America, Sanford University Press, 2004, էջ 151:

⁷ Այդ առումով անհրաժեշտ վերլուծություններ կան հետևյալ աշխատությունում. Stephanos Bibas, Plea Bargaining: Outside the Shadov of the Trial, 117(8) Harvard Law Review, June 2004:

⁸ Տե՛ս Promoting the rule of law (ABA/CTTL). Judicial reform for Armenia. April 2002. American Bar Association. Central and east European law initiative, էջ 74-79:

⁹ Տե՛ս Joint Opinion on tye amendments of 17 March 2008 to the Law on Conducting Meetings, Assemblies, Rallies and Demonstrations of the of Armenia by the Venice Commission and OSCE/ODIHR by the Venice Commission at its 75th Plenary Session (Venice, 13/06/2008-14/06/2008), էջ 59-63:

¹⁰ Տե՛ս Mauer B., Le principe de respect de la dignite' humaine et la Convention europeenne des droits de l'homme, Mintpelllier: Universite Montpellier, 1988, էջ 298-301: